

**«Հայաստանի Հանրապետությունում «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2201 10 110 0, 2201 10 190 0, 2201 10 900 0, 2201 90 000 0 ծածկագրերի դասվող ապրանքների՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում նույնականացման միջոցներով դրոշմավորման կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ**

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

\_\_\_\_\_ 2024 թվականի N \_\_\_\_-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ «ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ» (ԱՏԳ ԱԱ) ԴԱՍԱԿԱՐԳՉԻ 2201 10 110 0, 2201 10 190 0, 2201 10 900 0, 2201 90 000 0 ԾԱԾԿԱԳՐԵՐԻՆ ԴԱՍՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով 2018 թվականի փետրվարի 2-ի «Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման մասին» համաձայնագիրը և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 396.1-ին հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետությունում 2024 թվականի փետրվարի 1-ից Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2201 10 110 0, 2201 10 190 0, 2201 10 900 0, 2201 90 000 0 ծածկագրերին դասվող՝ դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորումն իրականացվում է համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից 2021

- թվականի մարտի 5-ին հաստատված՝ Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման համակարգի հիմնական տեխնոլոգիական կազմակերպչական մոդելի (այսուհետ՝ հիմնական մոդել):
2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ԱՏԳ ԱԱ 2201 10 110 0, 2201 10 190 0, 2201 10 900 0, 2201 90 000 0 ծածկագրին դասվող՝ դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքները Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով՝ դրոշմապիտակներով դրոշմավորված լինելու դեպքում կարող են չդրոշմավորվել հիմնական մոդելի համաձայն:
  3. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ԱՏԳ ԱԱ 2201 10 110 0, 2201 10 190 0, 2201 10 900 0, 2201 90 000 0 ծածկագրերին դասվող ապրանքների՝ հիմնական մոդելի համաձայն դրոշմավորման կանոնները՝ համաձայն հավելվածի:
  4. ԱՏԳ ԱԱ 2201 10 110 0, 2201 10 190 0, 2201 10 900 0, 2201 90 000 0 ծածկագրերին դասվող ապրանքների գրանցման ժամանակ այդ ապրանքների վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է [Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 113 որոշմամբ](#) հաստատված հավելվածին համապատասխան:
  5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հավելված**

**ՀՀ կառավարության 2024 թվականի**

\_\_\_\_\_ -ի N\_\_\_\_ -Ն որոշման

### **ԿԱՆՈՆՆԵՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ «ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՆՎԱՆԱՑՄԱՆ» (ԱՏԳ ԱԱ) ԴԱՍԱԿԱՐԳԳԻ 2201 10 110 0, 2201 10 190 0, 2201 10 900 0, 2201 90 000 0 ԾԱԾԿԱԳՐԵՐԻՆ ԴԱՍՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ՝ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՂԵԼԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ**

1. Սույն կանոններով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգրք) 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2201 10 110 0, 2201 10 190 0, 2201 10 900 0, 2201 90 000 0 ծածկագրերին դասվող ապրանքների (այսուհետ՝ ջրեր)՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից 2021 թվականի մարտի 5-ին հաստատված Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման համակարգի հիմնական տեխնոլոգիական կազմակերպչական մոդելի (այսուհետ՝ հիմնական մոդել) համաձայն դրոշմավորման հետ կապված հարաբերությունները:

2. ԱՏԳ ԱԱ 2201 10 1100, 2201 10 1900, 2201 10 9000, 2201 90 0000 ծածկագրերին դասվող ապրանքների դրոշմավորման համար օգտագործվում է նույնականացման միջոց՝ նիշերի եզակի հաջորդականություն, որը ներկայացված է մեքենայական ընթերցման համար հարմար Data Matrix GS1 ձևաչափով երկչափ շտրիխ կոդի տեսքով և ձևավորված է ISO/IEC 16022:2006 միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխան «Տեղեկատվական տեխնոլոգիաներ: Ավտոմատ նույնականացման և տվյալների հավաքագրման տեխնոլոգիաներ: Data Matrix ձևաչափով շտրիխ ծածկագրի սիմվոլիկայի տեխնիկական հատկորոշիչ» կամ դրան նույնական Եվրասիական տնտեսական միության անդամ պետության ազգային ստանդարտի սիմվոլիկայի հստակեցում: Դրոշմավորման ծածկագիրը նույնականացման միջոցի վերափոխելիս պետք է կիրառվի ECC 200-ի սիմվոլիկան՝ օգտագործելով FNC1 նշանը՝ որպես տվյալների համապատասխանության նշան GS1-ի կիրառման նույնացուցիչների (AI) տիպային ձևաչափին:

3. Ջրերի անհատական (սպառողական) փաթեթավորման թվային նույնականացման միջոցը ներառում է դրոշմավորման ծածկագիր՝ բաղկացած տվյալների 3 խմբից, որոնցից առաջինն ու երկրորդը ձևավորում են ջրի անհատական (սպառողական) փաթեթավորման նույնականացման ծածկագիրը, իսկ երրորդ խումբը՝ ստուգման ծածկագիրը: Ընդ որում՝

1) առաջին խումբը բաղկացած է 14 թվանշանից (առևտրային միավորի գլոբալ նույնականացման համարը (GTIN)) և ներառում է ապրանքի ծածկագիրը, որին նախորդում է կիրառման նույնացուցիչը (01), որը գեներացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված ազգային օպերատորի (այսուհետ՝ օպերատոր) կողմից՝ հիմնվելով տնտեսվարողի՝ վերը նշված արտադրանքի վերաբերյալ տրամադրած տեղեկատվության վրա,

2) երկրորդ խումբը բաղկացած է 13 նիշից (թվեր, լատինատառ այբուբենի մեծատառեր ու փոքրատառեր, ինչպես նաև հատուկ նիշեր (!" % & ' ( ) \* + , - . / \_ : ; = < > ? ) ) և ներառում է արտադրանքի անհատական (սպառողական) փաթեթավորման անհատական սերիական համարը, որին նախորդում է կիրառման նույնացուցիչը (21), որը գեներացվում է օպերատորի կամ տնտեսվարողի կողմից (տվյալների այս խմբի եզրափակիչ նիշը հանդիսանում է նիշ-բաժանարարը, որն ունի «29» ծածկագիրը ASCII նիշերի աղյուսակում),

3) երրորդ խումբը բաղկացած է 4 նիշից (թվեր, լատինատառ այբուբենի

մեծատառեր ու փոքրատառեր, ինչպես նաև հատուկ նիշեր (!"%&'()\*+,-./\_:=<>?)) և ներառում է ստուգման ծածկագիրը, որին նախորդում է կիրառման նույնացուցիչը (93) և որը գեներացվում է օպերատորի կողմից:

4. Նույնականացման միջոցը կիրառվում է անհատական (սպառողական) փաթեթավորման պիտակի կամ կաչոն պիտակի վրա այնպիսի մեթոդով, որը թույլ չի տալիս նույնականացման միջոցն առանձնացնել փաթեթից:  
Նույնականացման միջոցը չի կարող կիրառվել սպառողական փաթեթավորման այնպիսի մասերի վրա, որոնք առանց վնասվելու կարող են կառուցվածքային տարանջատվել: Անհատական (սպառողական) փաթեթավորման վրա նույնականացման միջոցը կիրառվում է փաթեթավորման ցանկացած հատվածի վրա, այդ թվում՝ խցանափակման միջոցի վրա, բացի փաթեթավորման ստորին հատվածից (հատակից):

5. Կախված յուրաքանչյուր դյույմի վրա տպագրության կետերի քանակից՝ նույնականացման միջոցի չափսը կարող է լինել համաձայն հետևյալ սանդղակի՝

1) 200 կետ յուրաքանչյուր դյույմի վրա - 11.2x11.2 միլիմետր կամ 14.0x14.0 միլիմետր,

2) 300 կետ յուրաքանչյուր դյույմի վրա - 9.3x9.3 միլիմետր, 11.2x11.2 միլիմետր, 13.0x13.0 միլիմետր կամ 14.9x14.9 միլիմետր

3) 450 կետ յուրաքանչյուր դյույմի վրա - 8.7x8.7 միլիմետր, 9.9x9.9 միլիմետր, 11.2x11.2 միլիմետր, 12.4x14.4 միլիմետր, 13.7x13.7 միլիմետր, 14.9x14.9 միլիմետր կամ 16.1x16.1 միլիմետր,

4) 600 կետ յուրաքանչյուր դյույմի վրա - 7.5x7.5 միլիմետր, 8.4x8.4 միլիմետր, 9.3x9.3 միլիմետր, 10.2x10.2 միլիմետր, 11.2x11.2 միլիմետր, 12.1x12.1 միլիմետր, 13.0x13.0 միլիմետր, 14.0x14.0 միլիմետր, 14.9x14.9 միլիմետր կամ 15.8x15.8 միլիմետր:

6. Անհատական (սպառողական) փաթեթավորման և (կամ) կաչոն պիտակի վրա կիրառվող նույնականացման միջոցը չպետք է տպագրվի փաթեթավորման թափանցիկ թաղանթի վրա: Պիտակի վրա չպետք է լինի մեկ այլ տեղեկատվություն, որը կխոչընդոտի նույնականացման միջոցի ընթերցմանը: Նույնականացման միջոցը պետք է տեղադրվի այնպես, որ չխախտվի արտադրանքի փաթեթավորման վրա կիրառված տեղեկատվության ամբողջականությունը տեխնիկական կանոնակարգման ոլորտի նորմատիվային փաստաթղթերի պահանջների համաձայն:

7. Կիրառման պահանջներն են՝

1) արտադրանքի անհատական (սպառողական) փաթեթավորման վրա կիրառելու համար պետք է օգտագործվի այնպիսի տեխնոլոգիա, որն ապահովում է փաթեթավորման վրա կիրառված նույնականացման միջոցների ընթերցումը կիրառելու պահից մինչև արտադրանքը սպառողին վաճառելու պահը,

2) չի թույլատրվում փաթեթավորման վրա տպել արտադրանքի

փաթեթավորման որևէ տարր, որը ծածկում է մակերեսը և դժվարացնում նույնականացման միջոցների ընթերցումը:

8. Ջրերի փաթեթավորման վրա նույնականացման միջոցները կիրառելու համար օգտագործվում են մակնշման հետևյալ հիմնական եղանակները`

1) մակնշման ուղիղ եղանակ (ներառում է կիրառման տարբեր հնարավորություններ` լազերային կիրառում, ջերմային փոխանցում: Ծածկագիրը պետք է կիրառվի դրա համար պատրաստված մակերեսի վրա և ապահովի հակադրության ցանկալի մակարդակը, ծածկագրի շուրջ անհրաժեշտ ազատ գոտին),

2) պիտակավորում: